



**ՆԱՅԱՍԱԿԱՆ ԿԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՎԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը**

ԱՆՆԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

9 հունիսի 2011թ.

Նայասրանի Նանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Վ. Պողոսյանի
Անդամակցությամբ՝ Վ. Նովհաննիսյանի
Ա. Պետրոսյանի

Ուսումնասիրելով քաղաքացի Գեուրգ Ծարությունի անհատական դիմումով գործը
քննության ընդունելու մասին հարցը,

ՊԱՐԶԵՑ.

Նամաձայն ՆՏ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացի Գեուրգ Ծարությունը 2011թ. մայիսի 26-ին դիմել է ՆՏ սահմանադրական դատարան՝ խնդրելով քննության առնել եւ որոշել ՆՏ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասի համապարասխանությունը ՆՏ Սահմանադրության 1-ին հոդվածի պահանջներին:

Տվյալ անհատական դիմումի նախնական ուսումնասիրության արդյունքներով պարզվեց, որ դիմումն ակնհայտ անհիմն է, քանի որ դիմումում բերված չեն անհրաժեշտ եւ բավարար իրավական փաստարկներ՝ վիճարկվող իրավադրույթի ենթադրյալ հակասահմանադրականությունը հիմնավորելու համար: Անհատական դիմումի ընդունելիության պարտադիր պայման է սահմանված «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասով, որում ամրագրված է, որ դիմումը պետք է պարունակի Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ:

ՆՏ սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-839 որոշմամբ իրավական դիրքորոշում է արտահայտել «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասի վերաբերյալ՝ ամրագրելով, որ վիճարկվող օրենքի դրույթի ենթադրյալ հակասահմանադրականությունը պետք է հիմնավորված լինի «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասում նշված որևէ հատկանիշով:

Սույն անհատական դիմումի նախնական ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ պահպանված չէ վերը հիշատակված դրույթի իմպերատիվ պահանջը, այսինքն՝ առկա չէ «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջներին համահունչ իրավաբանորեն ձեւակերպված որևէ հիմնավորում:

Դատական կազմն արձանագրում է նաեւ, որ դիմողը, ձեւականորեն վիճարկելով վերոհիշյալ նորմի սահմանադրականությունը, ըստ էության, բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության եւ կիրառման արդյունքում ընդունված դատական ակտերի օրինականության հարց: Փաստորեն, դիմողը փորձել է դատական ակտերի իրավական հետեւանքները վերագրել խնդրո առարկա իրավադրույթի սահմանադրականության խնդրին: ՆՏ սահմանադրական դատարանն իր՝ 2009թ. մարտի 17-ի ՍԴԱՈ-21 որոշմամբ արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձեւականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպէս սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին եւ 6-րդ կետերով, 69-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՆՏ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց .

Քաղաքացի Գեորգ Ծափուրյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

9 հունիսի 2011թ.

ՍԴԴԿՈ/1-14

**Նախագահող՝
Անդամներ՝**

